

ՄՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՄԵՐՈՑ ՍԱՀԱԿԱՑ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՑ

«Որք զարդարեցին տնօրինաբար
գիմաստս անեղին, հաստատելով
յերկրի զգիր կենդանի»
(Շարական)

Հայաստանայց Եկեղեցին, այսօր, կը տօնախմբէ մեր մեծ թարգմանիչ վարդապետներու՝ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի յիշատակը: Ս. Սահակ Հայրապետ եւ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետ հիմնեցին հայ մշակոյթի ոսկեդարը: 387 թուականին, Հայաստան աշխարհ բաժնուած էր երկու մասերու՝ Պարսկական եւ Յունական իշխանութիւններու միջեւ, եւ 428ին Արշակունեաց հարստութիւնը փուլ կեպած էր: Հայ ժողովուրդը կը գտնուէր լինելու թէ չլինելու հարցականին առջեւ: Հայ գրի եւ մշակոյթի չգոյութեան հետեւանքով, վտանգուած էր նաեւ հայ մշակութային անկախութիւնը: Միակ լուծումը այս անբարոյական վիճակէն ազատելու, հայ գրի եւ հայ մշակոյթի ստեղծումն էր:

Այդ մեծ պատիւը կը պարտինք հայ ժողովուրդի հանճարեղ գաւակ եւ անդրանիկ ուսուցիչ՝ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետին, որ 405 թուականին կատարեց հայ գրերու գիտը, խրախուսանքովը եւ օժանդակութեամբը Ս. Սահակ Հայրապետին եւ Վառմաշապուհ թագաւորին:

406 թուականին, հայ գրերու գիտով, Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետ, հայ ժողովուրդի գոյութիւնը կը դնէր ամուր հիմքերու վրայ, եւ ազգային մշակոյթին առջեւ կը բացուէին լայն հորիզոններ: Ռոյնաւայու եւ բարգաւաճելու:

Հիմնեցող դարուն կը հիմնուէր հայ մշակոյթի ոսկեդարը, եւ Ս. Գրի թարգմանութեամբ, պատմական կրօնական

եւ թարգմանական աշխատանքներով կը ճոխանար հայ գրականութիւնը:

Պարսկական եւ Յունական տիրապետութեան դէմ, պէտք էր ներքին հոգեւոր եւ ազգային անկախութիւն, եւ այդ կը կատարէին հայ եկեղեցին եւ հայ մշակոյթը: Թարգմանիչ վարդապետները եղան հայ ազգային մշակոյթի զարթօնքի ռահվիրաները: Իրենց գրական արգասիքներով, ներշնչման եւ ստեղծագործման հզօր ազդակ եղան հետագայ հայ հեղինակներուն:

Հայ մշակոյթը, դարերու ընթացքին, պահեց հայ ժողովուրդի ինքնութիւնը: Ամ եղաւ ներքին, անաղիկ բերդը հայուն: Օտար հրոսակներ չկրցան զայն կորզել հայու հոգիէն:

Այսօր, սփիւռքի բոլոր տարածքներուն վրայ սփռուած, կ'ապրինք օտար մշակոյթներու եւ լեզուներու ազդեցութեան տակ: Գոյութիւն ունի մշակոյթներու բախում: Այս դժուարին կացութիւններուն մէջ, պարտինք պահել հայ լեզուն, հայ մշակոյթը: Ազգի մը գոյապայքարին մէջ, մշակոյթը հզօր ուժ է, որքան տնտեսականը եւ զինուորականը: Մշակոյթը պէտք է սակարկութեան դրուի նիւթական հաշիւներով: Հանձնք հայու հոգիէն ստորակայութեան զգացումը, եւ տանք մեր մանուկներուն եւ երիտասարդներուն հայութեան հպարտանքը եւ արժանաւորութիւնը: Մեր թարգմանիչ վարդապետներու կանչն է այսօր մեզի՝ ըլլալ արթուն, հոգատար հայ մշակոյթին եւ հայ արժէքներուն:

ԱՆՈՒՇԱՒԱՆ Ծ. ՎՐԻ. ԶՂԱՆԵԱՆ